Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 16-ի N 351-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ				
Ռազմավարական նպատակ - ԲՈԼՈՐ ԵՐԵԽԱՆԵՐՆ ՈՒՆԵՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ **Վերջնական արդյունք – 3-5 տարեկանների առնվազն 95%-ն ընդգրկված է նախադպրոցական ծառայություններում:**				
Նպատակ 1. Նախադպրոցական կրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում ու հզորացում **Վերջնական թիրախ (2030 թ.) – Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, և յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի օգտվել այդ ծառայություններից:**				
NN ը/կ	Գործընթաց/ Գործողություն	Ակնկալվող արդյունք	Կատարող/ համակատարող	Ժամկետ
1.1.	**Նախադպրոցական կրթության մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման մեխանիզմների ներդրում**			
1.1.1.	Նախադպրոցական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման կրթական ծրագրերի համապատասխանեցում նախադպրոցական կրթության բովանդակության պահանջներին	Նախադպրոցական կրթության բովանդակությանը համապատասխանող մանկավարժների վերապատրաստման ծրագիրն առկա է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2024 թ.

1.1.2.	Նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների կազմակերպում՝ մեդիա գործիքների ու SS կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ	Վերապատրաստում անցած նախադպրոցական կրթության անձնակազմի մասնաբաժինը, այդ թվում՝ մանկավարժներ, ղեկավար անձնակազմ, հասցված է՝ 2023 թ. -20% 2024 թ. - 40% 2026 թ. - 60% 2030 թ. - 100%	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2030 թթ.
		Ծնողավարման դասընթացներ իրականացնում են նախադպրոցական հաստատությունների՝ 2024 թ.- 20% 2026 թ. - 50% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2024-2030 թթ.
1.1.3.	Նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմի գործարկում	Հավաստագրված տնօրեն ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 40% 2024 թ.- 70% 2026–2030 թթ. շարունակակական՝ 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ.
1.1.4.	Նախադպրոցական հաստատություններում մասնագիտական կադրերի առկայության ապահովում՝	Նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների տրանսպորտային	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2030 թթ.

	տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով	փոխհատուցման կարգը մշակված և հաստատված է, կարգով նախատեսված շահառու հանդիսացողներից փոխհատուցում ստացող մանկավարժական աշխատողների մասնաբաժինը հասցված է՝ 2024- 2030 թթ. շարունակական՝ 100%	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	
1.1.5.	Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով	Նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման մեխանիզմը գործարկված և ներդրված է, տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների մասնաբաժինը հասցված է՝ 2024 թ.- 10% 2026 թ.- 20% 2030 թ.- 30%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
1.2.	**Նախադպրոցական կրթության բովանդակության և որակի բարելավում**			
1.2.1.	Նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակական վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները	Նախադպրոցական կրթության չափորոշիչը հաստատված և գործարկված է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ.

		Նախադպրոցական կրթության ծրագրերը հաստատված և գործարկված են:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2026 թթ.
Նպատակ 2. Նախադպրոցական կրթության կառավարման և ֆինանսավորման ծախսարդյունավետության ապահովում՝ այդ թվում մասնավոր ոլորտի ծառայությունների զարգացման միջոցով **Վերջնական թիրախ (2030 թ.) – Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, և յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի օգտվել այդ ծառայություններից:**				
2.1.	**Նախադպրոցական կրթության ոլորտում ֆինանսավորման նոր մոդելների գործարկում**			
2.1.1.	Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաների համար պայմանների ապահովման ֆինանսավորում	Ըստ ԿԶԱՊԿՈՒ երեխաների մասնաբաժնի՝ գործում է 1-4% բարձրացված չափաքանակ: ՀՀ պետական բյուջեից ԿԶԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված ֆինանսավորման մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 34% 2024 թ. - 50% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
2.1.2.	Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև	Նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների,	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2030 թթ.

	շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների կրթության ֆինանսավորում	ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից 100 %-ով: ՀՀ պետական բյուջեից ԿՁԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ պայմանների ապահովմանն ուղղված ֆինանսավորման մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ.- 27% 2024 թ.- 40% 2026 թ.- 80%	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
2.1.3.	Նախադպրոցական կրթության ծառայությունների զարգացած ցանցի ներդրում՝ մասնավորի հետ համագործակցությամբ	Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների համամասնության մեջ մասնավոր հաստատությունների շարունակական աճը հասցված է՝ 2023 թ. - 10% 2024 թ. - 40% 2026 թ. - 50%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2024-2030 թթ.
2.2.	**Նախադպրոցական կրթության կառավարման արդյունավետության բարձրացման գործիքակազմի ներդրում**			
2.2.1.	Նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման թափանցիկ և պարզ համակարգի ներդրում	Նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման կարգերը վերանայված և ներդրված են, նախադպրոցական ծառայությունները	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023 թ.

		լիցենզավորված են՝ ըստ նոր կարգի:		
2.2.2.	Երեխաների փոքրաքանակ համակազմ ունեցող բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների ինտեգրում կրթահամալիրների կառուցվածքում՝ միասնական կառավարմամբ	Կապան խոշորացված համայնքի օրինակով ՀՀ գյուղական բնակավայրերում գործող նախադպրոցական ծառայություններ ունեցող կրթահամալիրների թիվը հասցված է՝ 2026 թ. - 94 2030 թ. - 156	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2026-2030 թթ.
2.2.3.	Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկում	Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգը գործարկված է, տվյալները պարբերաբար հավաքագրվում և վերլուծվում են համակարգի բոլոր հաստատությունների համար:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2023-2024 թթ.
Նպատակ 3. 0-5 տարեկան երեխաների բոլոր խմբերի համար նախադպրոցական ծառայությունների ծածկույթի ամբողջական ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում **Վերջնական թիրախ (2030 թ.) – Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, և յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի օգտվել այդ ծառայություններից:**				
3.1.	**Նախադպրոցական ծառայությունների ամբողջական հասանելիության ապահովման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացում և ծառայությունների ներդրում**			

3.1.1.	Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների քարտեզագրում, ըստ քարտեզագրման արդյունքների հիմնանորոգում և վերակառուցում՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր	Հիմնանորոգված և վերանո-րոգված/վերակառուցված նախադպրոցական հաստատությունների թիվը հասցված է՝ 2023 թ. - 198 2024 թ.- 342 2026-2030 թթ.- 521	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
3.1.2.	Նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում, ներառյալ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում, նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում	Նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թիվը հասցված է՝ 2023 թ.- 154 2024 թ.- 90 2026 թ.- 28 2030 թ. - 0	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե	2023-2030 թթ.
		Նոր կառուցված նախադպրոցական հաստատությունների թիվը հասցված է՝ 2023 թ. - 68 2024 թ.- 125 2026-2030 թթ.- 201		
		Նոր ներդրված այլընտրանքային ծառայությունների/համայնքների թիվը հասցված է՝ 2023 թ. - 7 2024 թ. - 14 2026-2030 թթ. - 28		

3.1.3.	Նախադպրոցական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում	Նախադպրոցական հաստատությունների մասնաբաժինը, որտեղ մշակված և հաստատված են աղետների ռիսկերի կառավարման պլանները, հասցված է՝ 2023 թ.- 20% 2024 թ. - 40% 2026 թ.- 80% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
3.1.4.	Նախադպրոցական հաստատություններում զարգացնող միջավայրի ապահովում՝ ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով	Զարգացնող միջավայրով ապահովված ն/դ հաստատությունների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ.- 12.5% 2024 թ.- 25%% 2026 թ. - 50% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
3.1.5.	Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում 0-2 տարեկան երեխաների խմբերի ֆինանսավորում՝ ապահովելով բոլոր խոշորացված համայնքներում մսուրի ծառայությունների հասանելիություն	0-2 տարեկան երեխաների՝ պետական բյուջեից ֆինանսավորվող խմբերի թիվը հասցված է՝ 2023 թ.- 5 2024 թ.- 10 2026 թ. - 150 2030 թ.- 300	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2024-2030 թթ.
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ				
Նպատակ 1. Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում				

Վերջնական թիրախ (2030 թ.) – Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան վերանայված բովանդակություն և վերահիրատարակված դասագրքեր:				
NN ը/կ	Գործընթաց/ Գործողություն	Ակնկալվող արդյունք	Կատարող/ համակատարող	Ժամկետ
1.1.	**Հանրակրթական հիմնական ծրագրերի և դասագրքերի որակի բարելավում և ներդրում դպրոցներում**			
1.1.1.	Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակաբար վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները, ուսուցչի և դպրոցի ինքնավարության և մասնակցայնության մեծացումը և ստեղծարարության խթանումը	Վերանայված բոլոր առարկայական ծրագրերը համապատասխանում են միջազգային ստանդարտներին, ուղղված են բարելավելու ուսումնառության վերջնարդյունքները և նպաստելու սովորողի մասնագիտական կողմնորոշմանը: Վերանայված բոլոր առարկայական ծրագրերը փուլային փորձարկված և ներդրված են:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2026 թթ.
1.1.2.	Ուսումնական նյութերի, այդ թվում՝ դասագրքերի, մշակման գործընթացի վերաբերյալ օրենսդրական հիմքերի սահմանում՝ ապահովելով ճկունություն և մրցակցություն, բարելավելով հեղինակային իրավունքի դաշտը	Ուսումնական նյութերի, այդ թվում՝ դասագրքերի, մշակման գործընթացն ապահովող վերանայված օրենսդրությունը՝ ուղղված ճկունության և մրցակցության ապահովմանը, առկա է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023 թ.
1.1.3.	Ուսումնական նյութերին, այդ թվում՝ դասագրքերին, ներկայացվող մանկավարժահոգեբանական և	Ուսումնական նյութերին, այդ թվում՝ դասագրքերին, ներկայացվող	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2026 թ.

	սանիտարահիգիենիկ ստանդարտների համապատասխանության նպատակով փորձաքննության իրականացում՝ ներառական կրթություն ու լավագույն կրթական վերջնարդյունք ապահովելու համար	մանկավարժահոգեբանական և սանիտարահիգիենիկ ստանդարտների համապատասխանության փորձաքննության համակարգը ներդրված է:	Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	
1.1.4.	Հանրակրթական դասագրքերի վերահրատարակում՝ վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան	Վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան ստեղծված և վերահրատարակված են հանրակրթական առարկաների դասագրքեր՝ 2023 թ. 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների, 2024 թ. 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարանների, 2026 թ. բոլոր դասարանների համար:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2030 թթ.
1.2.	**Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման գործիքակազմի մշակում և իրականացում**			
1.2.1.	Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ	Կամավոր ատեստավորման արդյունքում հանրակրթական դպրոցի հավելավճար ստացող ուսուցիչների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 16.6% 2024 թ.- 31.0% 2026 թ.- 63.0% 2030 թ. - 80%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

1.2.2.	Ուսուցչի դրույքաչափի և աշխատանքային նկարագրի վերանայում՝ նվազեցնելով վերջիններիս վարչական աշխատանքի ծավալը և հնարավորություն ստեղծելով առավելագույնս մանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար	Կարգը առկա է և շարունակաբար բարելավվում է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023 թ.
1.2.3.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների իրականացում, այդ թվում՝ մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ	Կարիքի վրա հիմնված մասնագիտական զարգացման ծրագիրը ներդրված է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023 թ.
		Կարիքի վրա հիմնված մասնագիտական զարգացման ծրագրի համապատասխան վերապատրաստված ուսուցիչների համամասնությունը հասցված է՝ 2023 թ. - 10% 2024 թ. - 30% 2026 թ. - 80%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2023-2030 թթ.
1.2.4.	Գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների հավելյալ խրախուսման մեխանիզմների ներդրում	Գործում է գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների գծով ուսուցիչների պահանջարկի լրացման արդյունավետ գործիքակազմ, խրախուսման հավելյալ ծրագրերի շնորհիվ ուսուցիչների պակասը գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում և ԲՏՃՄ առարկաների գծով կրճատվում է տարեկան 30%-ով:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2023-2030 թթ.

1.2.5.	Մանկավարժի որակավորման ճկուն մեխանիզմների մշակում և ներդրում, այդ թվում՝ երկակի որակավորմամբ մանկավարժների պատրաստում	Նոր մեխանիզմներով շնորհված մանկավարժության որակավորում ստացած դպրոց ընդունված ուսուցիչների թիվը հասցված է՝ 2023 թ.- 24 2024 թ. - 26 2026 թ.- 32	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2026 թթ.
1.2.6.	Ուսուցիչների նպատակային ուսուցման, ինչպես նաև հեռավոր համայնքներ գործուղման ծրագրերի և ընթացակարգերի վերանայում	Ուսուցիչների նպատակային ուսուցման, գործուղման ընթացակարգերի վերաբերյալ առկա է վերանայված և հաստատված օրենսդրական կարգավորում:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2026 թթ.
1.2.7.	Նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ Սփյուռքի ներուժը, ինչպես նաև մասնավոր ոլորտի որակյալ կադրերին, այդ թվում՝ ԲՏՃՄ ուղղությամբ, հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացում ընդգրկելու նպատակով	Նպատակային ծրագրերում ընդգրկված՝ սփյուռքի և մասնավոր ոլորտի կադրերի մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 10% 2024 թ. - 20% 2026-2030 թթ.- 30%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2030 թթ.
1.2.8.	Մանկավարժների և վարչական աշխատողների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերի ու որակավորումների համապատասխանեցում հանրակրթության բովանդակությանը,	Հանրակրթական ուսումնական հաստատություններում ղեկավար և վարչական անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների պլանը առկա է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023 թ.

	այդ թվում՝ վերաորակավորման ճկուն մեխանիզմների ներդրմամբ	Հանրակրթության բովանդակությանը համապատասխանող՝ մանկավարժական և վարչական աշխատողների կրթական ծրագրերի մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 30% 2024 թ. - 50% 2026 թ. - 80% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Գործընկեր կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023-2030 թթ.
		Մանկավարժական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխանեցված որակավորման բնութագրերն առկա են:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2026 թ.
Նպատակ 2. Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով **Վերջնական թիրախ (2030 թ.) – Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից: Առկա կլինի ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայր բոլոր սովորողների համար: Կունենանք հեռավար կրթական ծառայություններ, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացներ, որոնք ներդրված կլինեն բոլորի համար: Հեռավար դասավանդման վերաբերյալ տարեկան կվերապատրաստվի ուսուցիչների 20%-ը: Սովորողների մոտ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում՝ արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների միջոցով: Կունենանք որակյալ և մոտիվացված մանկավարժներ: Դպրոցական սնունդ ծրագրից օգտվող շահառուների ցանկի ընդլայնում:**				
2.1.	**Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների՝ կրթության համակարգում արդյունավետ ընդգրկման գործիքակազմի ներդրում**			
2.1.1.	Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկում	Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման կարգը վերանայված է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,	2023 թ.

			Ներքին գործերի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	
		Հայտնաբերված և ուղղորդված երեխաների մասնաբաժինը, պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների կազմում, հասցված է՝ 2023 թ. - 50% 2024 թ. - 70% 2026 թ. - 90% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
		Երկարօրյա ծառայություններ մատուցող դպրոցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 7.5% 2024 թ. - 30% 2026 թ.- 60% 2030 թ. - 90%		2023-2030 թթ.
		Երկարօրյա ծառայություններից օգտվող սովորողների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ.- 30% 2024 թ. - 40% 2026 թ. - 60% 2030 թ. - 100%		2023-2030 թթ.
2.2.	**Հանրակրթական հաստատություններում որակյալ ներառական կրթության ապահովման մեխանիզմների ներդրում**			
2.2.1.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ ֆիզիկական	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2030 թթ.

	ապահովում՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով	միջավայրի մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ ապահովող հաստատությունների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 25% 2024 թ. - 50% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ, «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամ	
2.2.2.	Հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժահոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովում	Հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը, որոնցում առկա են մանկավարժահոգեբանական ծառայություններ, հասցված է՝ 2023 թ.- 70% 2024 թ.- 80% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2023-2030 թթ.
2.2.3.	Ծնողների հետ համագործակցության գործիքակազմի մշակում և ներդրում	Ծնողների հետ դասղեկների արդյունավետ համագործակցության գործիքակազմ կիրառող ուսումնական հաստատությունների մասնաբաժինը հասցված է՝ 2024 թ. - 20% 2026 թ.- 60% 2030 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2024-2030 թթ.
2.2.4.	Հանրակրթական ուսումնական հաստատություններին որակյալ խորհրդատվության և աջակցության	Անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն ստացող հաստատությունների	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2030 թթ.

	տրամադրում ռեսուրս-կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից	մասնաբաժինը հասցված է՝ 2023-2030 թթ. շարունակական՝ 100%	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	
2.2.5.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական ստանդարտների հետ	Կամավոր ատեստավորմանը մասնակցած մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ.- 30% 2024 թ. - 60% 2026-2030 թթ. շարունակական՝ 100% Կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացող մասնագետների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 15% 2024 թ. - 30% 2026 թ. - 60% 2030 թ. - 75%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.
2.2.6.	Գնահատման ազգային համակարգի վերանայում՝ ապահովելով համարժեքությունը՝ գնահատման միջազգային ստանդարտներին	Վերանայված գնահատման ազգային համակարգ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ	2028 թ.
2.3.	**Ուսուցման այլընտրանքային եղանակների միջոցով կրթական ծառայությունների հասանելիության և որակի ապահովում**			
2.3.1.	Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների	Մշակված հեռավար դասընթացների մոդուլների թիվը՝	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

	այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ժամանակավորապես բնակվող անչափահասների համար	2023 թ.- 24 2024 թ.- 39 2026 թ. - 69 2030 թ.- 131		
		Հեռավար ուսուցման մենթոր դպրոցների ծառայություններից օգտվող հանրակրթական դպրոցների թիվը հասցված է՝ 2023 թ.- 40 2024 թ. - 30 2026-2030 թթ.՝ ըստ անհրաժեշտության	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2023-2030 թթ.
		Ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային բաց պաշարների թիվը հասցված է՝ 2024 թ. - 3 2026 թ. - 9 2030 թ. - 21	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2024-2030 թթ.
		Հեռավար դասավանդման վերաբերյալ վերապատրաստված ուսուցիչների թիվը հասցված է՝ 2023 թ. 15000 2024 թ. 22500 2026 թ. 37500 2030 թ. 67500	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	2023-2030 թթ.
		Ապահովված է հեռավար ուսուցման նյութերի մատչելիություն հաշմանդամություն ունեցող սովորողների համար՝	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

		2023 թ. - 10% 2024 թ. - 20% 2026 թ. - 40% 2030 թ. - 80%		
2.3.2.	Մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի արտադրություն ու տարածում	Ստեղծված նյութերի քանակը հասցված է՝ 2023 թ. - 2 2024 թ. - 4 2026 թ. - 8 2030 թ. - 16	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.
2.4.	**Արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների ցանցի զարգացում և հասանելիության ապահովում**			
2.4.1.	Ավագ դասարաններում կրեդիտային համակարգի ներդրում, ներառյալ սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների զարգացման, դպրոցի և այլ կենտրոնների համագործակցության միջոցով	Ավագ դասարաններում կրեդիտային համակարգը ներդրված է: Արտադասարանական և արտադպրոցական ծառայություններ մատուցող դպրոցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 40% 2024 թ.- 50% 2026 թ.- 70% 2030 թ. - 90%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.
2.5.	**Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսում**			
2.5.1.	Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսման մեխանիզմների մշակում՝ կամավոր ատեստավորման միջոցով	Արտադպրոցական ուսումնական հաստատությունների կամավոր ատեստավորված մանկավարժների մասնաբաժինը հասցված է՝	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

		2023 թ. - 6. 9% 2024 թ. - 17. 5% 2026 թ. - 48. 3% 2030 թ. - 74. 5%		
2.6.	**Հանրակրթական հաստատություններում սովորողների սնվելու հնարավորությունների ընդլայնում և շարունակականության ապահովում**			
2.6.1.	Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համար առողջ սնվելու հնարավորությունների ապահովում	Աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 86. 2% 2026 թ. - 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
		Տարրական մակարդակում դպրոցական սնունդ ստացող աշակերտների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 68. 1% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	
Նպատակ 3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում անվտանգ, հագեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում **Վերջնական թիրախ (2030 թ.) – Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտները բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր:**				
3.1.	**Հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգ և արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմանների ապահովում**			
3.1.1.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզի կազմում՝ ներառյալ հաստատությունների տեղաբաշխումը և	Հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզն առկա	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2026 թթ.

	շենքային պայմանների գնահատումը՝ հիմնվելով Կապան խոշորացված համայնքի փորձնական ծրագրի արդյունքների վրա	է բոլոր մարզերի և Երևան քաղաքի համար:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	
3.1.2.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկերի և տեղաբաշխման վերանայում՝ ըստ կազմված նպատակային քարտեզի	Հանրակրթական ուսումնական հաստատությունների վերանայված տեղաբաշխման ցանկերն առկա են բոլոր մարզերի և Երևան քաղաքի համար:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2026 թթ.
3.1.3.	Համաձայն գնահատված արդյունքների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման և վերանորոգման այլ աշխատանքներ	Հիմնանորոգված/ վերանորոգված հանրակրթական հաստատությունների թիվը հասցված է՝ 2023 թ.- 92 2024 թ.- 185 2026 թ.- 300 2030 թ. - 400	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.
3.1.4.	Հանրակրթական ուսումնական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում	Հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը, որոնք իրականացրել են հաստատված աղետների ռիսկերի կառավարման պլանի 100%-ը, հասցված է՝ 2023 թ. - 30% 2024 թ. - 60%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2023-2030 թթ.

		2026-2030 թթ. շարունակական՝ 100%		
		Աղետների ռիսկի կառավարման և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու վերապատրաստման դասընթացներին մասնակցած աշխատակիցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 30% 2024 թ. - 30% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%		
		Թաքստոցներ/ապաստարան ունեցող դպրոցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 40% 2024 թ. - 60% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%		
3.1.5.	Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում	Անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերով, սարքավորումներով և ենթակառուցվածքներով համալրված դպրոցների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 30% 2024 թ. - 55% 2026-2030 թթ. շարունակական՝ 100%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Առողջապահության նախարարություն	2023-2030 թթ.

3.1.6.	Արվեստի և սպայական կրթության մասնագիտացված ավագ դպրոցների հիմնում	Դպրոցները հիմնադրված են:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Պաշտպանության նախարարություն, Ներքին գործերի նախարարություն	2026 թթ.
Նպատակ 4. Հանրակրթական հաստատությունների ծախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում **Վերջնական թիրախ (2030 թ.) – Գործող կառավարման արդյունավետ համակարգ՝ ապահովելով մասնակցայնություն և հաշվետվողականություն: Ներդրված ծախսարդյունավետ ֆինանսավորման մոդել, որի արդյունքում ծախսի նպատակայնությունը նպաստում է կրթության որակի ապահովմանը:**				
4.1.	**Հանրակրթական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրում**			
4.1.1	Հանրակրթական ուսումնական հաստատությունների բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարաբաժանում և առանձնացված իրականացում	Վարչատնտեսական կենտրոնացված կառավարման անցած հաստատությունների թիվը հասցված է՝ 2023 թ. - 163 2024 թ. - 300 2026 թ. - 600 2030 թ. - 1400	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2023-2030 թթ.
4.1.2.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացում	Խոշորացված խորհուրդների թիվը հասցված է՝ 2023 թ. - 500 2024 թ. - 600 2026 թ. - 800	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2026 թթ.
4.1.3.	Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին	Փորձնական ծրագիր, համայնքների թիվը հասցված է՝ 11:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,	2023-2030 թթ.

			ՀՀ մարզպետարաններ	
4.2.	**Հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրում**			
4.2.1.	Դպրոցների ֆինանսավորման կարգի փոփոխություն՝ անցում կատարելով դասարանների թվով ֆինանսավորմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նպատակային արդյունավետ ֆինանսավորմանը	Ֆինանսավորման նոր կարգը գործում է:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.
4.2.2.	Դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմի ներդրում բարձր և ցածր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների խրախուսման և զարգացման համար	Գործում է դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմը:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2024-2030 թթ.
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ				
Ռազմավարական նպատակ - ՁԵՎԱՎՈՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՄՐՑՈՒՆԱԿ ԱՅՆՊԻՍԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ:				
Վերջնական արդյունք - 1. **բոլոր նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կունենան եվրոպական չափանիշներին համապատասխան որակի հավաստագրեր,** 2. **աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի պատրաստում, որի արդյունքում ըստ մասնագիտության, աշխատանքի կանցնի շրջանավարտների 90%-ը:**				

Նպատակ 1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակակից մասնագիտական պահանջներին համահունչ **Վերջնական թիրախ (2030 թ.) - Մասնագիտական կրթական համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան 6 ամսից մինչև 1 տարվա ընթացքում ձեռք բերելու արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը:**				
NN ը/կ	Գործընթաց/ Գործողություն	Ակնկալվող արդյունք	Կատարող/ համակատարող	Ժամկետ
1.1.	**Նախնական և միջին մասնագիտական կրթության բովանդակության բարելավում և որակի ապահովում**			
1.1.1.	Նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների՝ երկրի և տարածաշրջանի տնտեսական կարիքներին համապատասխանության ապահովում՝ մասնավոր ոլորտի հետ համագործակցությամբ	Մասնագիտությունների ցանկը վերանայված է և համապատասխանում է երկրի ու տվյալ տարածաշրջանի տնտեսական կարիքներին՝ 2023 թ. - կատարվում են նախապատրաստական ուսումնասիրություններ, կարիքի գնահատում, 2024 թ.- ցանկը հաստատված է, 2026 թ.- ուսումնառությունն իրականացվում է ըստ վերանայված ցանկի, 2030 թ.- ուսումնառությունն իրականացվում է ըստ վերանայված ցանկի, որը շարունակաբար լրամշակվում է՝ արդի տնտեսական կարիքներին համապատասխանություն ապահովելու համար:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	2023-2030 թթ.

1.1.2.	Նախնական և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների և դրանց համապատասխան մոդուլային ծրագրերի մշակում ու վերանայում՝ երկրի և միջազգային արդի պահանջներին համապատասխան	Մշակված և վերանայված կրթական չափորոշիչների թիվը հասցված է՝ 2023 թ. - 362 2024 թ. - 384 2026 թ. - 428 2030 թ. - 516	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.
1.1.3.	Աշխատանքի վրա հիմնված ուսումնական (ԱՀՈՒ) ծրագրերի օրենսդրական և ինստիտուցիոնալ ներդրում	ԱՀՈՒ-մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 10% 2024 թ. - 11"3% 2026 թ. - 14% 2030 թ. - 22% ԱՀՈՒ մոդելով ուսուցում իրականացնող հաստատությունների մասնաբաժինը հասցված է՝ 2023 թ. - 10. 8% 2024 թ. - 12. 2% 2026 թ. - 15. 1% 2030 թ. - 23. 8%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2024-2030 թթ.
1.1.4.	ՆՄՄԿ որակի ապահովման համակարգի բաղադրիչների ներդրում՝ համապատասխան լիցենզավորման, ինստիտուցիոնալ հավաստագրման, ծրագրային հավատարմագրման, միջազգային ստանդարտներին և մշակված չափանիշներին	ՆՄՄԿՈՒ ոլորտում որակի ապահովման համակարգի միջազգային ստանդարտներին համապատասխան չափանիշները սահմանող փաստաթղթերի փաթեթը մշակված է, այդ թվում՝ 2023 թ.- կատարվել են ուսումնասիրությունները,	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

		նախապատրաստական վերլուծություն, 2024 թ.- մշակված է ՆՄՄԿՈՒ ոլորտում որակի ապահովման համակարգի միջազգային ստանդարտներին համապատասխան չափանիշները սահմանող փաստաթղթերի փաթեթ, 2026-2030 թթ.- գործարկված է ՆՄՄԿՈՒ ոլորտում որակի ապահովման համակարգի միջազգային ստանդարտներին համապատասխան չափանիշները սահմանող փաստաթղթերի փաթեթ, 2030 թ.- վերջնական թիրախ՝ գործարկված է ՆՄՄԿՈՒ ոլորտում որակի ապահովման համակարգի միջազգային ստանդարտներին համապատասխան չափանիշները սահմանող փաստաթղթերի փաթեթ:		
		ՆՄՄԿՈՒ բոլոր հաստատություններում ներդրված է որակի ապահովման համակարգ, և իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց՝ 2023 թ. - 20%	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

		2024 թ. - 31 % 2026 թ. - 54 % 2030 թ. - 100 %		
		ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում ուսուցանվող կարգավորվող մասնագիտությունների մասնաբաժինը, որոնցով իրականացվել է ծրագրային հավատարմագրման գործընթացը, կազմում է՝ 2026 թ. - 5 % 2030 թ. - 30 %	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2026-2030 թթ.
1.1.5.	Արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմների մշակում և գործարկում, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով	Մշակված և գործարկված են արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով՝ 2023 թ.- օրենսդրական փոփոխությունները մշակված են, 2024 թ.- օրենսդրական փոփոխությունները հաստատված են, մեխանիզմները մշակվում են, 2026 թ. - մեխանիզմները հաստատված են և գործում են ըստ հաստատված փուլայնության և ժամանակացույցի,	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2023-2030 թթ.

		2030 թ. - մեխանիզմներն ամբողջությամբ գործում են:		
